Frontispiece

Entitle

ԲԱՌԱՐԱՆ

Ալաֆ—կրակ, այրոցք, բոց
Ալէնի—ի տես բոլորի, բացեիբաց
Ալթ էնել—հաղթել
Ախբ—վերջ
Ախտ էնել տե՛ս ահթ էնել
Ակյար—եթե
Ակրդի գահ—նախաճաշի ժամ
Ահթ էնել—ուխտել, խոսք առ
Ահվալ—գլխիդ անցածը
Աղրութ—անգին քար
Աղու—թույն
Աճեպտես—այլանդակ, տարօրինակ, տգեղ
Աճպնալ—զարմանալ, ապշել
Ամբրվենի—ամայի
Ամբ էնել—հրամայել, կարգադրել
Ամրուճաք—սանձ
Անգնալ—ուշանալ
Անթետակ—անութի, թևի տակ
Անկրշկլա—աչքալոտ
Անճախ—հազիվ
Աշշի—խոհարար
Աշպրցել տես աճպնալ
Ապով—պատճառով
Աշեփա տե՛ս աճեպտես
Ասպար—1. իրավունք, թույլատվություն, 2. զենք
Ասքյար—զորք, զինվոր
Ավալիվա—նախկին, առաջվա
Ավահի—տուն, սենյակ
Ավլադ—ժառանգ, որդի, զավակ
Ավուղուշ—որս
Արծել—(նաև առգել)—առաստաղի տակ գտնված փոքր ու ծուռ սենյակ կամ խուց, 2. մսուրի առջև երկու սյուների վրա դրված տախտ
Արունք—արյան գին

Բաբա իկիթ—քաջ տղամարդ
Բազար անել—1. գնումներ կատարել, 2. սակարկել
Բազրգան— քարավան
Բաթմիշ (էզնել)—խորտակվել
Բաժ—հասակ
Բալեն տալ—ստիպել, / հարկադրել, անհանգստացնել
Բաշխա—1. օտար, անծանոթ, 2. առանձին, մեկուսի
Բաքլա էնել—սպասել
Բաքլամիշ տե՛ս բաքլա էնել
Բեհուշ—անզգա
Բեն—շունչ
Բեսլամա—ծառա, նաժիշտ
Բըլե—միայն, բայց
Բիրդան—հանկարծ, անսպասելի
Բլազուկ—ապարանջան
Բխո—անձամբ
Բղիկ— կավե աման
Բոճի—փոքր շուն, շնիկ
Բռնել—բառնալ
Բրդել—մանր կտրատել
Բրինդրել—վիրավորել

Գահ—ժամանակ
Գաշել—փնտրել, որոնել
Գեղրար—անցնող
Գելանք—գայլեր
Գոլ—լիճ
Գոդուտիկ—թաքուն
Գորա—չափ, համապատասխան
Գոտ—1. թաքստոց, 2. գերեզման, 3. փոս
Գուլաշ—մենամարտ

Գումռա—1. առատ, 2. շատ, 3. բավականաչափ
Գունաքար—մեղավոր

Դախկել—խփել
Դառք—փորձանք
Դաս—այստեղ
Դասամամալ—թաշկինակ, սփրոց
Դաստուր—իրավունք, հրաման, թույլատվություն
Դավաթ—հյուրասիրություն, հրավերք
Դավայի ընկնել—վիճարանության տեղիք տալ
Դարկե—դուռ, անցք
Դեհից—կողմից
Դեմ—ուղիղ
Դեմաղ—այսպես ասած
Դեոր տե՛ս դոր
Դեվրեշ խըլըխ—դերվիշի հագուստով
Դի—կողմ
Դիլակ—1. խնդիր, ուխտ, 2. ցանկություն
Դիր—անդամ
Դից—այնտեղից
Դխիրել—հավաքել, կուտակել
Դհից տե՛ս դեհից
Դհորվե—որտեղից
Դնաղ էնել—ծաղրել
Դոլրին—հեռադիտակ
Դոխտուր—բժիշկ
Դողրուսին—եղելություն
Դոստ—մտերիմ
Դոր—հերթ
Դո՛ր—ո՛րտեղ, ո՞ւր
Դունյաքիլի մալ—աշխարհի ունեցվածքը, հարստությունը
Դուրան— հարթավայր
Դուքնդար—խանութպան

Եղվնեկ—աղավնի
Եմակ—կերակուր, ուտելիք

Զայիր—հավանաբար, երևի
Զանկին—հարուստ, ունևոր
Զըքել տե՛ս սկել
Զկել—սուզվել
Զմեն—բոլոր
Զվոնել—1. շրշել, պտտվել, 2. փնտրել
Զրկել—զարկել, խփել
Զուր վերավի—յուր վրայի

Էթում—որբ
Էլման—նորից, կրկին
Էնա—այն
Էն ապով—նրա համար
Էնոքի—նրա համար, այդ պատճառով
Էնտեանէ—այնտեղից
Էորոխկել—ուղարկել
Էրաղի—օղի
Էփէի—բավականին, բավականաչափ

Ըդ հաղուն— այդ ժամանակ
Ըռաղի—համաձայն
Ըռեշ—հետք, ոտնահետք
Ըռղա տե՛ս ըռաղի
Ըռղ կիդա—պետք կգա
Ըրղխ—բաժին, բախտ
Ըռժի—անյուղ
Ըռուդ—տակ, մոտ
Ըստապուն—այս ժամանակ
Ըստհաղ—1. այս ժամանակ, 2. այնուհետև

Թախմա—խորհուրդ, կարծիք, ենթադրություն
Թահնա—մեկուսի, դաղտնի
Թամ—կատարյալ
Թամիզ—մաքուր, բոլորովին
Թամուլ—անօրեն, հանցավոր, մեղավոր
Թանբիհ—խրատ, հանձնարարություն
Թասլիմ—վստահել, հանձնել, հանձնարարել
Թավ—1. պատեհ ժամանակ, 2. սով, քաղց, 3. բոլորովին, ամբողջապես
Թավլա—ախոռ, դոմ
Թատարուկ—պատրաստություն
Թարաֆ—կողմ
Թարղի—դերձակ
Թարիֆ էնել—պատմել
Թաֆ—ժամանել, հանդիման, դեմ-դիմաց
Թերուր—փետուր

Թըրընտաղ—բառացի՝ նետաձիգ, գործածվում է իբր գեղեցկատես, վայելուչ հասակ ունեցող երիտասարդ
Թըփըթել—համբերել
Թիփով ու չափուկով—արագությամբ
Թորա (էնել)—վերջ տալ, հրաժարվել
Թոր—բաց թող
Թույ—տեսք, կերպարանք
Թուռլու—տեսակ
Թուռլու-թուռլու—տեսակ-տեսակ
Թուրան տե՛ս դուրան

Ժեխ (ժըխեր)—աղբ, ցեխ
Ժեխնոց—աղբանոց
Ժխլել—զրուցել, խոսել, պատմել
Ժխշել—շարժել, թափ տալ
Ժողովք էնել—ողորմություն խնդրել, մուրալ
Ժռել—միզել

Իբրիխ—կավից ջրի աման, կուլա
Իդաբա—ապրուստ, միջոց
Իլայի քի—չէ որ չէ
Ինքար (էնել)—հրաժարվել, ժխտել
Իշար—արթուն, զգաստ
Իշթես կապվավ— ախորժակս փակվեց
Իշկել—նայել, տեսնել
Իպրըխ տե՛ս իբրիխ
Իրըք—բան
Իքրամ—հյուրասիրություն

Լազաթ չտալ—նեղացնել, անհանգստացնել
Լազմ—վայել, արժանի
Լախա—հոգս, գործ
Լակլակ—արագիլ
Լակյան— կոնկ
Լանկա—ոտքով խփել, քացի
Լանկառի—ճաշի աման
Լաղըբ—պատասխան
Լառ—որդի
Լարել—հետապնդել
Լըփ—բուռ
Լմեցավ—լրացավ
Լոխմա—պատառ
Լոտոզ—փոքրիկ

Խարուլ էնել—հանդուրժել, համաձայն լինել
Խազբանդ—սազարած
Խալի տե՛ս կալի
Խալափալախ—աղմուկ
Խալբ—կեղծ
Խամարա—պղնձյա մեծ աման
Խանա—տուն
Խանդակ—փոս
Խաշընդվել—տխուր, տրտում հուսահատ
Խասյաթ—բնավորություն, սովորություն
Խավազ—վանդակ
Խավմել—համաձայնել
Խարբուզ—ուս
Խարզա—խարազան
Խեղինե—գանձարան
Խեճ—մոտ
Խեճոռք—կեղև
Խեչ տե՛ս խեճ
Խեվաս տե՛ս խավազ
Խըդրաց—իրար հետ, միասին
Խըլղ—ուրիշ
Խըլսել—վերջացնել, ավարտել
Խըմաթ—արժեք, գին
Խընամիշ—մերժել
Խըռըսկել—մտցնել
Խըռշ—վառելիք
Խըտըր—չափ, որքան
Խլավ—լավ, գեր
Խոզի—երանի
Խոլ—պոչատ
Խոլասա—միով բանիվ, մի խոսքով
Խոմար—շնորհք, հունար
Խոնզըխ—կապոց, փաթաթոց (երեխայի)
Խոնչա—սեղան
Խորզա տե՛ս խուարզե
Խսա էնել—պատմել
Խստու—դիտավորյալ
Խփս էնել—հանկարծակիի բերել
Խուարզե—քրոջ որդի
Խուլմըներ—ծառաներ
Խումլում—հում-հում, արտ.՝ միանգամից տպանել
Խուրբաթ—պանդխտություն

Խուրդա—մանր դրամ
Խուֆարա տե՛ս ֆուխարա

Ծեխ—աղբ

Կաղի—դատավոր
Կամա—դաշույն, սուր
Կանուշնի—ձիանոց
Կաստ էնել—ձդտել, աշխատել
Կաֆա—սուրճ
Կրսա էնել—պատմել, զրուցել
Կիզփաթ—դեմք, տեսք
Կմաներ—նման էր
Կյալո—արդյոք
Կյամի—նավ
Կոլ տե՛ս գոլ
Կոլ—պողպատ
Կողել—թխել (հաց)
Կոնդախ—բարուր
Կոտկրիբա—կրիա
Կուդման—խուրջին
Կուլլրխութեն—ծառայություն

Հաբիկե—պարկ, ճամփորդական պայուսակ
Հաբոկել—կատաղել, գազազել
Հագեր տե՛ս ակյար
Հագուբա տե՛ս հաբիկե
Հազ էնել—սիրել, ուզել, ցանկանալ
Հալապի—չափ
Հաղ մէ—մի անգամ էլ, ևս մի անգամ
Համամ—բաղնիս
Համամչի—բաղնեպան
Հան—ահա
Հանցել—բացի
Հաշն—ուշք, գիտակցություն
Հ'առիք—առաստաղ
Հառչի դոբվան— առաջին անգամվա
Հավալգու—առաջվա, նախկին
Հավեգ—վրեժ
Հավիրել—հոգնել, շնչահեղձ լինել
Հավուզ—ավազան
Հատկել—հասցնել
Հարգե տե՛ս հարքե
Հարի—մինչև
Հարքե—եթե, թե որ
Հեքմութեն—բժշկություն
Հընթի տակ—թևի տակ
Հըվի— խնդիրք
Հ'իմաց—արթուն
Համալամիշ—լողացնել, մաքրել
Համանե—այժմվանից, հիմիկվանից, նախապես
Հնգուֆին—հարմար, վայել
Հոկուց—1. բացի, 2. սրանից
Հոնկուց—այնտեղից
Հորես բաց—այսուհետև
Հորի՞ն—ինչո՞ւ
Հ'ոցկա—այստեղից
Հունա—այնտեղ
Հ'ուստ—ո՞րտեղից
Հուտա—այստեղ
Հուքմաթ—դատավոր

Ղոշուն—ամբոխ, ժողովուրդ

Ճար—տեղ, ճանապարհ
Ճեպ—գրպան
Ճըղորի—օրորոց
Ճոկան—ցուպ
Ճոպել—փորձել
Ճուհապ—պատասխան

Մալհազա—խորհրդակցել
Մահավե—պատգարակ
Մահվա չգալ—չվստահել
Մահբամ—զուրկ
Մայան—անպայման
Մառախ—մտատանջություն, հոգս
Մառախոտել—տխրել, մտատանջվել
Մասրաֆ—ծախք, վաճառք
Մասում—պատանյակ, մանուկ
Մատամ— քանի որ, եթե
Մատէ էնել—տխրել, հոնքերը կիտել
Մարագ—հարդանոց
Մարամ—միայն թե, այնքան որ
Մարաչա ընկնել—քեն քշել
Մարդագով—գերանով
Մարգանակ—տղամարդուն նման, վայել
Մարիֆաթ—1. շնորհք, 2. գաղտնիք

Մեխանա—գինետուն
Մեղալ—մտածել, մտատանջվել
Մեյդան—հրապարակ
Մեշա—անտառ
Մընարա—աշտարակ
Միզիր—սփրոց
Մշավրա—խորհուրդ, խորհրդակցել
Մսի—դու մի ասի

Յաթաղ—անկողին
Յալվարմիշ—պաղատել, աղաչել, խնդրել
Յախա—օձիք
Յաման—ժամանակ
Յան—կամ
Յավաշ—1. սպասիր, 2. դանդաղ
Յարալու—վիրավոր

Նա—ո՞չ
Նախըլ էնել—պատմել
Նապանի—անմարդաբնակ
Նասիր—բախտ, վիճակ, երջանիկ, բախտավոր
Նարդիվան—աստիճան
Նաֆաս—շունչ
Նեճիր—որս
Ների—դո՛ւ
Նըա տե՛ս նա
Նըյար—թշնամի
Նշնտար—նշանառու
Նուկի—քաշ

Շալակ—բեռ
Շահրիստան—առևտրական, վաճառական
Շաշ ու մաթ—ապշած
Շարդ տե՛ս շարթ
Շարթ—գրաղ, պայման
Շենլիք—ժողովուրդ
Շլել—շինել
Շնողքնել—շնորհակալ լինել
Շոռ—աղի
Շոր տե՛ս շոռ

Ո՞ն—ո՞վ, ո՛րը

Զադր—վրան
Զաթին—1. դժվար, 2. վիրավորական, 3. զայրացուցիչ

Զայիր—մարգագետին
Զարի մի—մի ճար
Զափալախ—ապտակ
Զափուկ—կողով
Զաքմաշա—արկղ
Զըմ—մինչև

Պաթմիշ (էղնել)—խորտակվել
Պալքիմ—գուցե, մի կերպ, միայն թե
Պառեկ—մեշք, թիկունք, ուս
Պավտվել—թաքնվել
Պարենպար—հավասար
Պեսլամա տե՛ս բեսլամա
Պըպուկ—փետուր
Պիթըշմիշ—ավարտել, վերջացնել, ճարել
Պոռնկ—1. ափ, 2. շուրթ
Պրինտրել—վիրավորել
Պուտուկ—կավից պատրաստված ճաշի ման

Չաամաթ տե՛ս շաղամաթ
Չազարաթ—գազար
Չաղամաթ—ժողովուրդ
Չանդարդի լինել—մտահոգվել, մտատանջվել
Չանֆիդան—հավատարիմ, նվիրված
Չղարա—գլանակ, ծխախոտ
Չվտկել—վազել
Չուապ—պատասխան

Ռըկել—խռովել
Ռըմպա—իմաստուն, գուշակ
Ռուսխաթ—խայտառակություն

Սազել—սկսել
Սալըխ տե՛ս սալըղ
Սալըզ—տեղեկություն, լուր առնել, իմանալ մի բան
Սանդրիչ—խաղի տեսակ
Սանյաթ—զբաղմունք
Սանք—տեսնենք
Սապր էնել—համբերել, սպասել
Սաքու—սենյակ, օդա
Սաֆա—բազմոց
Սէր անել —նայել, դիտել
Սերսուփ—մաքուր

Սբբրցնել—ավարտել, վերջացնել
Սրմթ—կողմ
Սբպա—սպի
Սրքթա—երկաթե կամ փայտե ցից
Սիլա տե՛ս սիհլա
Սիհլա—զենք
Սիհլավորուկ—զինված
Սինորկից—սահմանակից
Սկել—սուզվել
Սորա—վառարան
Սոլ—կոշիկ, ոտնաման
Սուկել տե՛ս սուքել
Սուճ—հանցանք, մեղք
Սուքել—շինել, կառուցել, պատրաստել

Վախ տալ—սպառնալ
Վարժատուն—դպրոց
Վելել—վայելել
Վի՞նից—ո՞ւմից, ո՞րից
Վիրա—նորից

Տաժանմիշ—դեմ առնել
Տախա—բոպե
Տախլ—վաճառասեղան
Տաղլա—ալիք
Տանի վախտ—արտ ճաշ տանելու ժամ
Տասմալ տե՛ս տաստմալ
Տաստմալ—սփրոց, թաշկինակ
Տարան իրկան—արտ.՝ ամուսնացրին
Տիթքուրթ—մերկ
Տիլ—ցեխ, տիղմ
Տկլոզ—մերկ
Տունտուլիկ—ապաստարան, հյուղակ
Տուքընդար—խանութպան

Ռուսխաթ—իրավունք, թույլատվություն

Ցան—վառելիք անասունի աղբից
Ցփնել—շաղ տալ
Ցուրուր—թռչունի տեսակ

Փանճել—չանդռել, խփել
Փառշ—կավից աման
Փարսակ—սնանկ, աղքատ
Փեթնալ—մեծանալ, հասակ առնել
Փեճ—փեշ, քղանցք
Փեճկիր—սրբիչ
Փեյտա—հայտնվել, ի հայտ դալ
Փետատ—քլունգ
Փիթցեր—մեռնել, սատկել
Փողան—1. փողոց, 2. միջանցք
Փրթուշ—պատառ

Քամխա—ավերի
Քասարով—կարոտով
Քար—շահ, օգուտ
Քարամաթ—շահույթ
Քարման—իլիկ
Քեֆյաթ—իրականություն, պատմություն
Քզել—կռանալ, կախվել
Քոշ—շուլ, մաշված կտորներ, փալաս
Քսա էնել—պատմել
Քրփ—դագաղ
Քյախ—ժամանակ
Քյամալ—ուժ, իմացություն
Քոխ—բուն, սագանոց
Քոմել—1. հավաքել, 2. հավաքվել
Քոմմե—խումբ
Քոշկ ու սարա—պալատ
Քսա—1. գրպան, 2. դրամապանակ գործած կամ կտորից
Քսեն—հաշվից, գրպանից
Քսպել—գնել, մտցնել
Քրքոտել—վշտանալ, զայրանալ, վիրավորվել, բարկանալ
Քփսել տե՛ս քսպել
Քուլլի—բոլոր, ամբողջ
Քունշ—անկյուն
Քուռի—խնամաթոռ

Օժտուն տե՛ս ուժտուն
Օլոր օր—հաշորդ օրը
Օլրտել—շրջել, փնտրել
Օլուխուշաղ տե՛ս օղլուշախ
Օղխաթ—փորձանք
Օղլուշախ—կին, կնիկ մարդ
Օղմկել—1. երկարել, ընկնել, 2. հենել
Օնիքիլար—պալատականներ
Օսյաթ—խրատ, ցանկություն, ապսպրանք
Օր բը ղավուր տե՛ս օր բը զոր

Օրբրզօր—Օրեցօր
Օրշնիթք—օրհնություն
Օրտու—զորք

Ուժը ցրվել—արտ. հարստությունը բաժանել
Ուժտուն—գութանի լուծի անուն
Ուղուրին—կյանքի համար
Ուշապ—վիշապ

Ֆալակերեր—հղիացել
Ֆալէի—գրբաց, գուշակ
Ֆայդա—օգուտ, օգնություն
Ֆայմել—հասկանալ, գլխի ընկնել
Ֆրթլել տե՛ս ֆրլրթել
Ֆրլրթել—վրա պրծնել, հարձակվել
Ֆինշան—գավաթ
Ֆլան քասի ինատուն—արտ. ի հեճուկս այսինչի
Ֆքրել—մտածել
Ֆուխարա—խեղճ, աղքատ